եթէ ատոնք են Ամերիկացի Միսիոնարաց աչքի զարնող ծառայութիւններն, այսուհետև Հայ անհատք իրենք զիրենք կրթելու և իրենց բնական իրաւունքները ճանաչելու և ինքնօգնութիւն սովրելու համար պէտք չը պիտի ունենան այսպիսի օտարականաց, որք դատարակութեան քօղին ներքև կրօնական ծառայման միայն կաշխատին:

(Մասիս)

ԹԷՐՃԷՄԱՆԸ ԷՖԷԵԱՐԻ ԴԱՏԸ

—

Վազրթի փաստաբան Պ. Ձիպրայիլ Ղարզուր խիստ ծիծաղելի առարկութիւն մը կընէ, երբ չորեքշաբթի աւուր Մանզումէի Եվքեարի մէջ մեզ պատասխանել կարծելով կըսէ թէ Մասիս Թէրձէմանի Էվքեարի հրատարակութեանց մասին Վազրթի փաստաբանին ըսածը ժխտելով ինքզինք մանանկից կընէ Թէրձէմանի դատին և զայն ամբաստանող ընդհանուր դատախազին դէմ կը խօսի:

Պ. Կարկուրի այս խօսքը ժամանակաւ ըստորին դասու Թրքաց ոմանց «Հաւատքիս հայհոյեցո»-ը կը յիշեցնէ մեզ. և արդարև, ո՛ր միտիտ չը մտնեներ թէ՝ մինչդեռ ընդհանուր դատախազը Թէրձէմանը Էվքեարի միայն երկու յօդուածներն իւր ձեռքն առած էր, Վազրթի փաստաբանն յանդգնութիւնն առաջ տանելով, հարստահարութեանց ինչպէս նաև բարենորոգմանց գործին վրա Թէրձէմանը Էվքեարի մէջ հրատարակեալ բոլոր տեղեկութիւններն «Արաձիզ» անուամբ մկրտած է: Արդ, մեք Պ. Կարկուրի այս անընդունելի պահանջումն հերքեցինք, և ըսինք որ իւր այդ «Արաձիզ» բառն անտեղի էր: Ինչ որ գրած եմք այդ նկատմամբ, կատարելապէս կը հաստատեմք զայն, և աւելի պատասխան մը տալու հարկ չեմք տեսներ առ այժմ: Մայրաքաղաքիս Գաղղիական Սթամպուլ լրագրին իւր նախընթաց թիւով հետևեալը կը հրատարակէ Թէրձէմանը Էվքեարի գործին վրայ. «Բարերադդ կը համարիմք զմեզ ծանուցանելով թէ Թէրձէմանը Էվքեար Հայ լրագրին անօրէնն ու արատաւորն, որք Հայոց ապստամբական մասնախորհրդի մը գործիքը լինելու մասին Վազրթի ըրած ամբաստանութեան վրայ ընդհանուր դատախազին խնդրանօք բանտարկուած էին, նախընթաց օրն արձակեցան՝ շնորհիւ Պատրիարք Ներսէս սրբազանի կողմանէ առ Բ. Դուռը տրուած բացորոշ ապահովութեանց: Ն. Սրբազնութիւնն յիշեալ լրագրապետաց պարկեշտութեան երաշխաւորեց, և անոնց դէմ եղած անլուր ամբաստանութեան ստութիւնն հաստատեց:

«Թէրձէմանը Էվքեար իւր երէկուան թերթով յուզիչ յօդուած մը հրատարակելով, շնորհակալութիւն կը յայտնէ Ամեն. Ներսէս Սրբազանի՝ այն բարձր և բարեսիրական հոգածութեան համար, որով լցուցած է յիշեալ լրագիրը:

«Այս առաւօտեան Վազրթ լրագիրը՝ տեսնելով թէ որն իւր ձեռքէն կը փախչի, չը կրնար իւր զայրոյթը զսպել Հայոց Պատրիարքին դէմ, և սաստիկ յօդուած մը գրելով, տեղական գործոց խառնուելու մասին Ն. Սրբազնութեան իրաւունքը կը ժխտէ և կըսէ թէ Թէրձէմանը Էվքեարի դատն եկեղեցական գործ մը չէ և իւր իրաւասութեան չը վերաբերիր:»

Վազրթի յօդուածը, զոր Սթամպուլ կը յիշէ, արդարև Հայոց Պատրիարքին դէմ գրուած է, բայց հարկ չեմք տեսներ երկար պատասխան մը տալ այդպիսի չնչին գրուածի մը, որոյ ինչ ոգով խմբագրուած լինիլը զուշակել դիւրին է:

Միայն կը բաւականանամք հաստատելով թէ մինչդեռ ընդհանուր դատախազը լրագրական յանցանքներ միայն կը վերագրէր Թէրձէմանը Էվքեարի պատասխանատուից, Ներսէս Սրբազան ո՛չ թէ այդ լրագրին այս կամ այն յօդուածը պաշտպանած էր, այլ ընդհանրապէս ապահովութիւն տուած էր Բ. Դրան նախարարաց թէ խառվարներու մեծ ընկերութիւն մը կենալու և Թէրձէմանը Էվքեարն ալ անոնց գործիք կամ կեդրոն լինելու ամբաստանութիւնն անտեղի էր, և այսպէս Հայոց Պատրիարքն ո՛չ միայն իւր կատարեալ իրաւասութեամբը շարժած էր, իրրև ամենէն աւելի տեղեակ ազգին մէջ անցած իրողութեանց, այլ և դատարանաց անկախութեան դէմ ոտնձգութիւն չէր ըրած, (ինչպէս կըսէ Թուրք լրագիրը), քանի որ ընդհանուր դատախազն ալ արդէն այդպիսի ամբաստանութիւն մը չէր ըներ: Ասկից զատ, քանի որ ապացուցուած էր թէ Թէրձէմանի խմբագրապետին և արտօնատէրին բանտարկութիւնն համաձայն չէր օրինաց, Հայոց Պատրիարքն այդ բանտարկութեան դէմ բողոքած էր, և բանտարկեալց պարկեշտութեան երաշխաւորած. հետևաբար, ո՛չ միայն իւր իրաւանց սահմանէն դուրս չէր ելած, այլ և արդարասիրական գործ մ'ըրած էր, որ Վազրթի զայրոյթ պատճառելուն հակառակ՝ ոչ նուազ գովելի է: Իսկ այդ զայրոյթը դիւրաւ կը մեղմուի այժմ, քանի որ այսօր աւելի քան երբէք յոյս կայ թէ Թէրձէմանի գործն արդարութեամբ պիտի կարգադրի, և գոհացուցիչ լուծման մը յանգի:

(Մասիս)

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, 9 փետրվարի

Վաղուց է «Մշակին» նամակ չէի գրած, սաստիկ զբաղված լինելով. Բացի իմ սովորական պարապմունքներից զբաղված էի այժմ իմ Ուրպեան ճանապարհորդութեան մասին վերջացրած աշխատանքս տպագրելով.

Վերջին ժամանակներս գերմանական լրագրութեան մէջ շատ քիչ է խօսվում հայերի մասին, այդ պատճառով չտապում եմ ուղարկել «Մշակի» խմբագրութիւնը «Köln. Zeitg.» լրագրի այն համարը, որի մէջ մի թէև փոքրիկ, բայց նշանաւոր նկատողութիւն կայ հայերի մասին. Հաւատացած եմ որ խմբագրութիւնը ուշադրութիւն կը դարձնէ այդ նկատողութեան վրա և կը տպի նրա թարգմանութիւնը իր էջերի մէջ. Ցօդուածի միտքը այն է, որ Բ. Դուռը լաւ կանի եթէ չտապի հայերին տալ խոստացած բէֆորմներ, եթէ ոչ կարող է ուշ լինել, որովհետև շուտով ուրիշ խնդիրների վրա կարող է բարդվել և «Հայոց խնդիրը» և աւելի էլ դժուարացնել թուրքաց տէրութեան դրութիւնը.

Մի քանի խօսք էլ ասեմ այժմ Գերմանիայի դրութեան մասին. Ամենքը այստեղ իրանց ներքին հարցերով են զբաղված և ասես մի վախ է տիրել ամենքին, ասես մի բան է պատրաստվում, բայց ոչ ոք չէ իմանում ինչ. Ամեն կողմից դրութիւնը թէ տնտեսական և թէ հասարակական շատ ծանր է. Գերմանիայի քաղաքական յարաբերութիւնները ուրիշ մի քանի պետութիւնների հետ լարված են երևում. Առհասարակ կարծես մի տեսակ տօթ է տիրում այստեղ, որ մրրիկ է նախագուշակում. Երկրի մէջ դժգոհութիւնը աճում է սաստիկ ծանր հարկերի պատճառով. Սիլէզիայի մէջ թանգութիւնը որ ցրտերի պատճառով դարձեալ սաստկացել է և ամեն կողմից կարօտածների համար օգնութեան է դրդում, այն հետևանքն ունեցաւ, որ ոչ ոք այլ ևս աշխատել չէ կամենում, բայց սպասում է որ կոմիտէտները օգնութիւն հասցնեն. Ցեռնոցները ասում են որ այդ նահանգի ազգաբնակութիւնը կատարելապէս յուսահատված է.

Այստեղ չատերին զբաղեցնում է զօրքի մեծացնելու առաջարկութիւնը, որ պահանջում է կառավարութիւնը և ուրեմն դորանով ակամայ մտցնում է առանց դորան էլ ծանր հարկերին ենթարկված ժողովրդի մէջ նոր և անտանելի ծախսեր....

Ամեն ուրիշ կողմերից սաստիկ խնայողութիւն է ցոյց տալիս կառավարութիւնը, իսկ զօրքի թիւը աւելացնելու համար նոր հարկեր է մտցնում. Ընդհանուր կարծիք է այստեղ, որ երբ Գերմանիայում զօրքի թիւը աւելացաւ, բոլոր մուս հարևան կառավարութիւններն էլ նմանապէս կը բազմացնեն իրանց զինուորների թիւը, այնպէս որ երկիրների զօրքերի համեմատական թիւը դարձեալ նոյնը կը մնայ. Եւ եթէ այսպէս կը շարունակի գերմանական կառավարութիւնը՝ հրէշաւոր ծախսերի կը հասցնի ամբողջ երկիրը.

Կղերականները դարձեալ սկսում են յանդուգն դառնալ և ծաղրում են ամեն ուրիշ ձգտումներ, որոնք դուրս են բուն կղերական ձգտումներից. Նրանք աշխատում են իրանց կողմը գրաւել կառավարութիւնը և տիրապետել այլ բոլոր կուսակցութիւնների վրա. Կուսակցութիւնները առհասարակ միմանց հետ այնպիսի լարված յարաբերութիւնների մէջ են գտնվում, որ մին մուսի երեսին ամենակոպիտ հայհոյանքներ են գցում.... Ամեն մէկը միսի աղնութեան վրա պարզ կասկածներ է յայտնում և «սուտ ու զրպարտութիւն» բառերը շատ սովորական և ամենօրեայ են դարձել պրուսական պատգամաւորների ժողովի մէջ.

Մի խօսքով ընդհանուր դրութիւնը այստեղ անտանելի է դարձել և երկար ժամանակ այսպէս մնալ չէ կարող.

Ս. Պետերբուրգի մէջ կայսրի դէմ գործած վերջին եղեռնագործութիւնը սարսափ զցեց այստեղ. ամեն շրջաններում և դէպի Նորին Մեծութիւնը ուղեցած համակրութիւնը ընդհանուր է, ինչպէս ընդհանուր է և ուրախութիւնը որ Կայսրի կեանքը պահպանվեցաւ նախախնամութեան ձեռքով.

Անդրէաս Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդոնի «Standart» լրագրին Կալկուտայից հեռագրում են, փետրվարի 18-ից հետևեալը. «Օտտինդիայի փոխարքան առաջարկում է որպէս Եակուբ-խանի յաջորդ վալի Մոհամէդին, որը պատրաստ է հէրատը տալ Պարսկաստանին, բայց հրաժարվում է զինվանել Ֆրանսիայի ցանկացած բոլոր ցամաքը.»

—Վիէննայի «Presse» լրագիրը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Կրէմիէի թաղման մասին, որը, ինչպէս յայտնի է, հրէայ էր. Ֆրանսիայի մեծ բարբին Կրէմիէի գերեզմանի մօտ աղօթում էր Ֆրանսիայի շուտով միութեան մասին. Պ. Եակոբսոնը, իր բազմաթիւ լսողների բուռն ծափահարութիւնների ժամանակ, խօսում էր այն բանի մասին, որ հրէական ծագումի ֆրանսիացի երիտասարդները առաջին կարգերումը կը կռուեն, երբ կը զարկի կռիվ ժամը.

—Սենատի ձախակողմը ենթադրում է Կրէմիէի տեղ ընտրել պ. Ալբէր Գրէվիին, որը այժմ Ալժիրիայի նահանգապետ է.

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ Բերլինի մէկ լրագիր այսպէս է նկարագրում իշխան Բիսմարկի Բէյշտագին առաջարկած միջոցները. հարկեր վճարել, զինուոր լինել և լռել—ահա ինչումն են կայանում գերմանական քաղաքացու իրաւունքները և պարտաւորութիւնները.

—Ֆրանսիական հանրապետութեան սենատը նշանակեց փետրվարի 23-ին ցմահ սենատորի ընտրութիւնը, հանգուցեալ Լէօն-դէ-Լավերնի տեղ.

—Ներկայ տարվայ յունվարին Ֆրանսիայում մտած է 335 միլիոն ֆրանկի ապրանք, իսկ արտադրված է 159 միլիոն ֆրանկի ապրանք. Վաճառականութեան այս անաջողութիւնը «Temps» լրագիրը բացատրում է նրանով, որ երեք անգամ չոր տարի և ֆիլոկսեր է եղել. 1876 թվի յունվարին անդադար նիւթեր բերված էին 55 միլիոն ֆրանկի, իսկ այս տարի, մի և նոյն ամսին 146 միլիոնի է բերված.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամերիկական «Railway Journal» լրագիրը, որը իր ընթերցողներին հաղորդում է Ներքին և արտաքին քաղաքականութեան ճիւղերից զանազան ամենանոր տեղեկութիւններ, բօրսային կուրսեր, կօնգրէսի մէջ եղած վիճաբանութիւններ և թատրոնական նորութիւններ, և որը ամեն օր է դուրս գալիս—հրատարակվում է Նիւ-Եօրկ և Սան-Ֆրանցիսկօ քաղաքների միջով չրջող գնացքի մէջ. Բոլոր լուրերը և տեղեկութիւնները, որոնք լրացնում են նրա սիւները, հաղորդում են այդ լրագրին հեռագրով Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների զանազան կէտերից, նշանակած կայարանների վրա, որոնց մօտով յայտնի օրը և ժամին գնացքը պէտք է անցնի. Լրագիրը շարվում է, տպագրվում է և գնացքի մէջ եղող ճանապարհորդներին բաժանվում է, քանի որ երկաթուղին պանում է հովիտներով և անտառներով. վազում է գետեր և բարձրանում է լեռների վրա. Ամենառաւօտ ճանապարհորդը ստանում է այս լրագիրը իր սուրճի հետ միասին, և այդպիսով նա գիտէ միշտ այն բոլորը, ինչ որ կատարվում է երկրագնդի վրա, իր եօթ օրվայ ճանապարհորդութեան ամբողջ ընթացքում, որպէսզի է 3,990 մղոն տարածութիւն անցնի. Սթորագրողը լրագրի համար փող մտցնելով Նիւ-Եօրկում, ճանապարհորդական տոմսակի հետ միասին, լրագրի վերջին համարը արդէն ստանում է Սիէրա-Նէվադայի բարձրութիւնների վրա. Չէ կարելի չը խոստովանել, որ ծովի մակերեսյթից 10,000 ոտնաչափ բարձրութեան վրա լրագրի տպագրութիւնը, չարժվող տպարանի մէջ, այնպիսի մի նշանաւոր փաստ է, որ արժանի է յիշվելու լրագրութեան ժամանակագրութեան մէջ և որ պատիւ է բերում ամերիկական հնարագիտութեան.

***

Անգլիական լրագիրներում հաղորդում են զանազան պետութիւններում և աշխարհի զանազան մասերում հրատարակվող պարբերական հրատարակութիւնների և լրագրերի ստատիստիկական թերը. Գերմանիայում 3.778 պարբերական հրատարակութիւններ և լրագիր եր են հրատարակվում, Աւստրիայում 1.200, Անգլիայում 2.509, Ֆրանսիայում 2000, Իտալիայում 1226, Ռուսաստանում 500, Եւրոպայում բոլորը 13,600 է հրատարակվում. Ասիայում 388, Աֆրիկայում 50, Ամերիկայում 9,129, Աւստրալիայում 100. Բոլոր պարբերական հրատարակութիւնները և լրագիրները աշխարհիս երեսին 23,290 է հաշուում.

***

Աէքքսանդր Դիւմայի «Ապահարզանի հարցի մասին» այս օրերս հրատարակած նոր գիրքը մեծ դղրդոց է զցել, նրա մէջ յայտնած մտքերի պատճառով, որոնք օրվայ հարց են կազմում. Հէնց հրատարակութեան առաջին առաւօտը 10,000 օրինակ ծախվեցաւ այդ գրքից. Ինչպէս լսվում է Պոլ Ֆէվալ նրա դէմ պատասխան է պատրաստում.

***

Էրնէստ Բրնանը փետրվարի 5, 8, 10 և 15-ին կը կարդայ դասախօսութիւններ Լօնդոնում «Հռոմի ազդեցութիւնը քրիստոնէութեան զարգացման վերաբերութեամբ.»

***

Ներկայ տարվայ յունվար ամսին Լօնդոնի համալսարանում աւարտած ուսանողների թւում յիշված են և 29 կանայք.

***

Միացեալ-Նահանգների «Iowa» նահանգում պատգամաւորների ժողովը վճռեց վերաքննութեան տակ զցել սահմանադրական օրէնքները, այն պայմանով, որ կանանց ևս իրաւունք տրվի երկրի ներկայացուցիչներ լինել, որպէս պատգամաւորներ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: Այսօր զինուորական դատարանը դատապարտեց մահվան պատժին, կախաղանի միջոցով, այն յանցաւորին, որ փորձ փորձեց կոմս Լօրիս-Մէլիքովին սպանելու: Դատավճիռը կը կայանայ վաղ առաւօտեան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 85 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 75 կ., երկրորդ 226 ր. 25 կ., արևելեան առաջին 90 ր. 12 կ., երկրորդ 90 ր. 12 կ., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 7 ր. 78 կ.: Ռուսաց մի բուրլ Լօնդոնի վրա արժէ 25,28 պէնս, ռուսաց 100 բուրլ Համբուրգի վրա արժէ 215 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 266 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ